ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՒ ՆՐԱ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հայ պատմագրութեան լաւագոյն էջերից մէկը Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնն է»՝ իր ժամանակի պատմագրութեան մէջ ամբողջական պատմութիւն, որում Խորենացին ներկայացրել է հայ ժողովրդի ծագումից մինչեւ Արշակունեաց արքայատոհմի կործանումն ընկած դէպքերը: Իր «Պատմութեան» հիմքում նա դրել է պատմական հաւաստի եւ ժամանակագրօրէն ստոյգ տուեալներ. «Չկայ ստոյգ պատմութիւն առանց ժամանակագրութեան»,- գրում է Քերթողահայրը:

«Խորենացին առաջինը եղաւ, որ գրեց հայ ազգի սիստեմական պատմութիւնը սկզբից մինչեւ իր ժամանակները,- գրում է Ս. Մալխասեանը: Սա մի ստեղծագործութիւն էր, «ի չգոյէ գոյի ածել» էր մի ազգի անցեալը, սա մի ծննդեան վկայական էր մեր ազգի համար, որ մինչեւ այդ ժամանակ չգիտէր, թէ ով է ինքը, եւ ինչ ծագում ունի: Կապելով հայ ազգի սկզբնաւորութիւնը Ս. Գրքի հետ, ծագեցնելով հայերին Յաբէթի ցեղից՝ նա հայ ազգի համար ստեղծեց պատուաւոր տեղ միւս հին ազգերի շարքում: Սերեցնելով հայերին աշտարակաշինութեան ժամանակակից Հայկից, նկարագրելով այս հսկայ աղեղնաւորին իբրեւ ազատութեան սիրահար եւ բռնակալ Բելին սպանող, նա փառաւոր ու սիրելի դարձրեց հայերին իրենց ծագումը»[1]:

Հայոց տիրակալները Խորենացու երկում բաժանուած են երկու մեծ խմբի՝ բնիկ տէրեր եւ եկուորներ: Առաջինի նկատմամբ է բեւեռուած Խորենացու մեծ սէրն ու նըւիրումը, մինչդեռ երկրորդ խմբի ներկայացուցիչները մեծամասամբ արժանանում են որոշ քննադատութիւնների: Զափաւոր վերաբերմունքի են արժանանում միայն այն եկուորները, որոնք նպաստել են երկրի բարեկարգմանը, հզօրացմանը, սահմանների ամրութեանը: Հայ ազգը Խորենացու համար հին ժամանակներից հայոց աշխարհում ապրած եւ ապրող, նոյն լեզուն ու արիւնը կրող ժողովուրդն է, որի յաղթանակների եւ յաջողութիւնների գլխաւոր նախապայմանը ազգային միասնութիւնն է, բնիկ տէրերի իշխանութիւնը, հայրենիքի յաջողութեան համար պայքարող հերոսները:

«Հայոց մեծերի ծննդաբանութիւնը» վերնագրով առաջին գրքում մի հետաքրքիր ընդգծմամբ նա միանգամից ներկայացնում է իր համակրանքը հայոց բնիկ, թէկուզեւ հեթանոս տէրերի նկատմամբ եւ փափաքում ծնուած լինել հզօրների ժամանակներում եւ ականատեսի աչքերով գրի առնել նրանց մեծագործութիւնները: Պատմահայրը գըրում է. «Քանզի ինձ այսոքիկ արք ի մերոց թագաւորաց են սիրելիք, որպէս բնիկք և իմոյ արեանառուք և հաւաստի հարազատք: Եւ սիրելի էր ինձ՝ յայնժամ գալ Փրկչին և զիս գնել, և առ նոքօք յաշխարհ զմուտն իմ լինել, և նոցա տէրութեամբն խրախճանալ, և յարդեացս ապրել վտանգիցս: Այլ վաղ ուրեմն փախեաւ ի մէնջ պատահումն այն թէ

[1] Տե՛ս **Մ. Խորենացի**, Հայոց պատմութիւն, Երեւան, 1981, էջ 33:

արդեօք և վիճակ»[2]։ Ըստ էութեան, Խորենացու համակրանքի ու սիրուն արժանացած բնիկ տէրերը ոչ միայն քաջ հերոսներ են, այլեւ՝ ազգային դիւցազուններ։

*Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ հերոսների կերպաւորման գլխաւոր չափանիշը նրանց կատարած գործերն են՝ դրական շեշտադրումով։ Ահա Մովսէս Խորենացին գրում է. «Վասն որոյ սիրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան – **Հայկ, Արամ, Տիգրան**. քանզի ըստ քաջացն՝ ազգք քաջք. իսկ միջոցքն՝ որպէս դէպ ումէք թուիցի կոչել» (էջ 100)։ Պատմահայրը մեծ հրճուանքով գովերգել է հայ ժողովրդի բնիկ թագաւորներին (Հայկ, Արամ, Արա, Երուանդ, Արտաշէս, Տիգրան)՝ ցանկանալով նրանց դարձնել հայ տիրակալների լաւագոյն օրինակ, բարձրացնելով հայոց միաբանութեան եւ հզօր ու փառահեղ պետականութեան գաղափարը՝ արտայայտելով իր սէրը նրանց հանդէպ։ «Ազգային գոյաբանութեան հիմքը եւ ընդգրկումն ու ձեւը պետականութիւնն է, եւ դրան են միտուած երեք կատարելատիպերի ընդհանրացումները, դրանց հետ կապուած՝ «բնիկ տէրերի» գոյաձեւային իմաստաւորումները»[3], - նկատում է Վ. Սաֆարեանը։*

Իր «Պատմութեան» հերոսներին ներարկելով առասպելական եւ վիպական տարրեր՝ Խորենացուն յաջողւում է ստանալ գեղարուեստական կերպարներ։

Նրա «Պատմութեան» մէջ անգամ եկուոր տէրերն են բաժանւում երկու խմբի՝ ըստ իրենց գործունէութեան դրական եւ բացասական կողմերի։ «Միշտ կարեւորելով «բնիկութեան» կենսաբեր ուժը՝ Խորենացին սթափ դիրքորոշմամբ արժեւորում է դա նաեւ օտար ծագումով տիրակալների մէջ, եթէ նրանց գործունէութիւնը ուղղուած է երկրի եւ պետականութեան ամրապնդմանը»[4]։

*Առաջին Արշակունին, որի մասին խօսում է Խորենացին, **Վաղարշակն** է։ Վերջինիս գահ է բարձրացրել պարսից Արշակ Մեծ արքան՝ օգտուելով հայոց անիշխանութիւնից եւ խառնաշփոթից։ Բայց Վաղարշակը, գալով իշխանութեան, դրական ազդեցութիւն է ունենում երկրի բարեկարգման համար։ Ընթերցողը այս Արշակունու մասին առաջինը իմանում է այն, որ Հայաստանում պարթեւ Արշակունիների հիմնադիր Վաղարշակը նամակ է յղում Արշակ Մեծին՝ գրելով, որ ինքն իր մտքի ու ուժերի սահմաններում հոգ է տանելու այս թագաւորութեան մասին։ Սա կերպարաւորման համար անշուշտ հետաքրքիր ընդգծում է։ Հերոսը նամակում խօսում է լիարժէքօրէն անկեղծ՝ առանց աւելորդաբանութիւնների՝ թողնելով դրական տպաւորութիւն։ Ապա իր նամակում նա անհրաժեշտութիւն է համարում իմանալ, թէ ովքեր են նախկինում տիրել Հայոց աշխարհին, եւ որտեղից են եկել այն նախարարութիւնները, որ կան Հայաստանում։ Արդիւնքում Արշակի Մեծի հրամանով եւ Վաղարշակ Արշակունու ցանկութեամբ Մար Աբաս Կատինան բացում է արքունական դիւանը՝ փորձելով գտնել փաստեր հայերի եւ նրանց երկրի մասին։*

Այնուհետեւ Վաղարշակ Արշակունին կարգաւորում է մեր աշխարհի հիւսիսային եւ արեւմտեան կողմերը՝ բնակեցնելով եւ շէնացնելով դրանք։ Նա կոչ է անում մարդկանց թողնել աւազակութիւնը, հպատակուել արքունական հրամաններին եւ յաւակնել աւելի բարձր պաշտօնների։ Յաջորդիւ՝ Խորենացին ծաւալուն ներկայացնում է, թէ՝ Վաղարշակը ինչպէս է կազմակերպում թագաւորութիւնը, ինչպէս եւ որտեղ է հիմ-

---

[2] **Մ. Խորենացի**, Հայոց պատմութիւն, Երեւան, 1981, էջ 80։ Այսուհետ սոյն գրից մէջբերումների էջերը կը նշուեն մէջբերումից յետոյ՝ փակագծերում։

[3] **Վ. Սաֆարեան**, Հայ միջնադարեան գրականութիւն, Երեւան, 2016, էջ 51։

[4] Նոյն տեղում, էջ 54։

*նում նախարարութիւնները եւ ինչպէս է կազմակերպում իր թագաւորութեան կենցաղավարութիւնը։ Նա նախարարութիւններ է սահմանում Բագրատունի (թագակիր ասպետներ), Գնթունի (արքային զգեստաւորող), Հայկազունի (արքայի թիկնապահ), Արծրունի (արքայի առաջից արծիւներ պահող), Գնունի (արքայի համար ըմպելիքներ պատրաստող), Սպանդունի (սպանդանոցները ղեկավարող) եւ այլ ցեղերի համար եւ ծառայութիւնների ղեկավարներ նշանակում այդ տոհմերի ներկայացուցիչներին։ Այս նոյն Վաղարշակը բնիկ Հայկազունիների շառաւիղներին ոչ կարեւոր պաշտօններում է նշանակում, աշխատում է նրանց հեռու պահել Այրարատից։ Վաղարշակը կարգաւորում է նաեւ արքունի կենցաղավարութիւնը՝ սահմանում արքունիք մտնելու եւ ելնելու, խորհրդի, կերուխումի եւ զբօսանքների ժամերը։ Արքայի կերպաւորման տեսանկիւնից հետաքրքիր է նաեւ այն փաստը, ըստ որի, Վաղարշակը իրեն երկու օգնական յիշեցնողներ է կարգում՝ մէկը բարին պէտք է յիշեցնէր, իսկ միւսը՝ վրէժխնդրութիւնը. «Եւ բարւոյ յիշեցուցանողին հրաման տայ՝ ի բարկութեանն արքայի և յանիրաւ հրամանս՝ յիշեցուցանել **զիրաւն** ու **զմարդասիրելն**» (ընդգծումը մերն է- **Ա. Կ.**)։ Սա բաւական հետաքրքիր ընդգծում է արքայի կերպարը մարդասիրութեան ջատագով ներկայացնելու առումով։ Թէպէտ Վաղարշակը հրաման է արձակում, որ քաղաքացիների յարգն ու պատիւը աւելի լինի, քան գիւղացիներինը, բայց նաեւ արգելում է քաղաքացիներին, որ գոռոզանան. նրանք պէտք է եղբայրաբար վարուեն գիւղացիների հետ։*

Պատմագրութեան եւ բանահիւսութեան մէջ կերպարը դառնում է սիրելի եւ դրական, երբ սահմանները պաշտպանելուց բացի ընդարձակում, զօրացնում եւ շէնացնում է երկիրը։ Ահա Խորենացին պատմում է, որ Վաղարշակը հրաման է տալիս նորոգել Շամիրամի քաղաքը եւ ուրիշ շատ տեղերում շինել բազմամարդ քաղաքներ, մարդաշատ գիւղեր։ Այդ տարածքների մարդաշատութիւնը ապահովելը սկսում է՝ իր որդիներին այդ վայրերում բնակեցնելով։ Միայն մի որդուն՝ Արշակին է նա պահում իր մօտ՝ իբրեւ իր ժառանգի, որն իրենից յետոյ պէտք է դառնար արքայ։ Նրա այս քայլը դառնում է օրէնք Արշակունի արքաների համար։

*Հետաքրքրական է **Արտաւազդ Արշակունու** կերպարը։ Վերջինիս կերպաւորման մէջ շատ հետաքրքիր գիծ է մտցուած։ Նա, ի տարբերութիւն նախորդների, ոչ մի կարեւոր բան չի արել իր երկրի համար։ Նա, սովորութեան համաձայն, իր եղբայրներին եւ քոյրերին բնակեցնում է այլ գաւառներում, իսկ Այրարատում մնում է միայն ինքը՝ որպէս գահի ղեկավար։ Ապա Խորենացին գրում է. «Բայց այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եղոյց. այլ ուտելեաց և ըմպելեաց պարապեալ, մօրից և եղեգնապուրակաց թափառեալ շրջէր և առապարաց, զիշավայրիս և զխոզս արածելով. զիմաստութիւնէ և զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, ծառայ և ստրուկ որովայնի արդարև լինելով՝ զաբիւս մեծացուցաներ» (էջ 158)։ Նման գնահատականը, ինչպէս նկատում է Մ. Մկրեանը, ցոյց է տալիս, որ Խորենացու համար մարդը, թէկուզ լինի արքայ, եթէ իր գործերով օգտակար չի լինում երկրին ու ժողովրդին, ապա նա ամենասինքլոր մարդուց էլ ցած է կանգնած[5]։ Ապա Խորենացին էլ աւելի վառ գոյներով ներկայացնում է Արտաւազդի կեանքի աւարտը։ Հռոմեացի եռապետ Անտոնիոսը գերեվարում է Արտաւազդին եւ յետոյ սպանել տալիս[6]։*

---

[5] Տե՛ս **Մ. Մ. Մկրեան**, Հայ հին գրականութեան պատմութիւն, Երեւան, 1976, էջ 184։

[6] Պատմական աղբիւրներում Արտաւազդը Տիգրան Մեծի որդի Արտաւազդ II-ն է, որ կառավարել է Ք. Ա. 55-34 թթ.։ Այս արքային գերեվարել է հռոմեական երրորդ եռապետութեան անդամ Անտոնիոսը, անցկացրել նրան յաղթահանդէսով Հռոմի փողոցներով։ Հայոց արքան եւ թագուհին հրաժարուել էին գլուխ խոնարհել Անտոնիոսի կնոջ՝ Կլեոպատրայի առաջ, եւ վերջինիս հրամանով Արտաւազդը գլխատում է։ Այսինքն՝ պարզ է դառնում, որ Ար-

*Բաւական հետաքրքիր են Արշամ Արշակունու որդու՝ **Աբգարին** վերաբերող հատուածները։ Վերջինիս կերպարը ներկայացնելու համար Խորենացին գործածում է ինչպէս սոսկ նկարագրական հատուածներ, այնպէս էլ մէջ է բերում Աբգարի թղթերն[7]՝ ուղղուած Քրիստոսին, Հռոմեացի կայսր Տիբերիոսին, որդուն՝ Ներսեհին, եւ այլոց, որոնցում Աբգարը ներկայանում է իբրեւ հաւատաւոր մարդ, որն անվերապահօրէն հաւատում է Փրկչի էութեանը։ Ինչպէս նկատում է Ստ. Մալխասեանը, Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ ներառուած նամակները աչքի են ընկնում իրենց հակիրճ ոճով։ Այս նամակները հաւանաբար վաւերական չեն, մեծ մասամբ պատմիչի հեղինակածներն են։ Խորենացու դարում սա ընդունուած ձեւ էր ոչ միայն մեր, այլեւ օտարազգի մատենագրութեան մէջ։ Բայց այդ նամակներն ուրիշ հետաքրքրական կողմ ունեն. նրանցից երեւում է, թէ Խորենացին ինչպէս է պատկերացնում յիշեալ թղթակիցների փոխադարձ յարաբերութիւնները. արդեօ՞ք մտերմական են այդ յարաբերութիւնները, թէ պաշտօնական, իբրեւ հաւասարներ են գրում միմեանց, թէ պետը ստորադրեալին կամ հակառակը. սրանցով էլ որոշւում են հայոց թագաւորների քաղաքական դիրքն ու նշանակութիւնը օտար արքաների նկատմամբ[8]։*

Մովսէս Խորենացին պատմում է, որ Աբգար Ե-ն, «լսելով Փրկչի սքանչելագործութիւնների համբաւը եւ հաւատալով, որ դրանք մարդու զօրութիւններ չեն, այլ՝ Աստծու», իր բանբերների միջոցով թուղթ՝ նամակ-խնդրագիր է ուղարկում Երուսաղէմ՝ Փրկչին, որպէսզի նա գայ եւ բժշկի իրեն, որովհետեւ մարմինն ապականուած էր չարաչար ցաւերով՝ բորոտութեամբ։ Աբգարը արժանանում է Փրկչի պատասխանին, որտեղ ասւում է, որ Փրկիչը կ՚ուղարկի իր աշակերտներից մէկին, որը կը գայ, «կը բժշկի եւ կեանք կը շնորհի քեզ եւ քեզ հետ եղողներին» (էջ 170)։ Փրկչի համբարձուելուց յետոյ Թովմաս առաքեալը Եդեսիա է ուղարկում Թադէոս առաքեալին, որը բուժում է Աբգարին, քաղաքի բոլոր հիւանդներին ու ախտաւորներին, քարոզում Աւետարանը եւ Եդեսիայի եպիսկոպոս կարգում Ադդէ անունով մետաքսագործին, ապա մեկնում, ըստ Մովսէս Խորենացու, Աբգարի քեռորդու՝ հայոց Սանատրուկ թագաւորի արքունիք։ Աբգարը[9] դարձի գալով նամակներ (թղթեր) է յղում Հռոմի Տիբերիոս կայսրին, Ասորեստանի Ներսեհ թագաւորին, որ իր որդին էր, Պարսից Արտաշէս թագաւորին, որպէսզի նրանք եւս ընդունեն Յիսուս Քրիստոսին՝ որպէս Աստծոյ Որդու եւ Փրկչի[10]։ Ահա Արտաշէսին գրած նամակներից մէկում Աբգարը գրում է. «Հաւատասցես բանի նորա, դու և եղբարք քո և ամենեքեան, որ հնազանդին քեզ կամաւոր։ Զի ախորժելի է ինձ՝ զձեզ ըստ մարմնոյ ազգականս՝ լինել ինձ մտերիմ հարազատս և ըստ հոգւոյ» (էջ 184)։ Այսինքն՝ Աբգար արքային հոգեհարազատ դառնալու համար կարեւոր նախապայման էր նոր հաւատին հետամուտ լինելը։

տաշիսեան արքաները երբեմն ներկայացւում են Արշակունիների անուան տակ։ Տե՛ս **Լ. Մկրտումեան**, Հայոց պատմութիւն, Երեւան, 2016, էջ 46։

[7] «**Թուղթ**» բառացի նշանակել է գրութիւն՝ ուղղուած մէկից միւսին, նամակ, ուղերձ։ Միջնադարեան հեղինակների «թղթերի» մէջ արծարծուել են կրօնական, փիլիսոփայական եւ սոցիալական հարցեր։ Տե՛ս **Էդ. Զրբաշեան, Հ. Մախչանեան**, Գրականագիտական բառարան, Երեւան, 1972, էջ 120։

[8] Տե՛ս **Մ. Խորենացի**, Հայոց պատմություն, Երեւան, 1961, էջ 46։

[9] Աբգարի մասին եղած առասպելի պատմաբանական վերլուծութիւնը հաստատում է, որ Եդեսիայի նշանաւոր տիրակալը, որ քրիստոնէութիւն ընդունեց, Աբգար Թ-ն է, ով ապրել է 2-րդ դարի վերջերին, իսկ առասպելը պատմական իրական դէպքը ետ է տարել մինչեւ մեր թուարկութեան սկիզբը եւ վերագրել մէկ այլ արքայի՝ Քրիստոսին ժամանակակից Աբգար Ե-ին։ Տե՛ս **Նիկողայոս Ադոնց**, Հայաստանը Յուստինիանոսի դարաշրջանում, Երեւան, 1987, էջ 385, 560-561.

[10] Տե՛ս **Է. Բ. Աղայեան, Բ. Առաքելեան, Գ. Գալոյեան եւ այլք**, Հայ ժողովրդի պատմութիւն, հ. 1, Երեւան, 1971, էջ 607։

Արշակունիների կերպարակերտման տեսանկիւնից առաւել կարեւոր են քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն ընդունած ***Տրդատ Մեծին*** *վերաբերող հատուածներն ու նկարագրութիւնները: Այդ մասերում տեսնում ենք Խորենացու ողջ համակրանքը արքայի նկատմամբ, նրա անձի եւ գործի փառաբանութիւնը: Տրդատը Արշակունիների մէջ եզակիներից է, որ արժանանում է Խորենացու դրական գնահատականներին: Անգամ կարող ենք նկատել, որ Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ Տրդատ Մեծը առաջին հերթին քաջ դիւցազուն է, հայոց հզօր արքայ:*

Տրդատի եւ Խոսրով Կոտակի մասին պատմող հատուածները ներկայացնելիս Խորենացին նշում է, որ նրանց մասին համառօտակի խօսում է Տրդատի «յաջող քարտուղարը», եւ ինքն օգտուել է Ագաթանգեղոսի աշխատութիւնից: Ապա պատմահայրը տալիս է Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» բովանդակութիւնը՝ մի քանի տողի սահմաններում՝ յաւելելով, որ ինքը ցանկանում է այս շրջանի անցքերը ներկայացնել երկար եւ խիստ ճշմարիտ տեղեկութիւններով. «Արդ թէպէտ և Ագաթանգեղոս այսպէս համառօտ էանց ընդ այս, բայց ես հաւանեալ եմ ձիգ և յերկար առնել զպատմութիւն ժամանակիս այսորիկ, ճառելով ի սկզբանէն, և ճշմարիտ ասացուածովք հոծ և խիտ» (էջ 246):

Տրդատ Մեծի հետ ընթերցողի ծանօթութիւնը սկսւում է նրա մանկութեան ողբերգականութեան պատկերից. կոտորւում է Խոսրով Մեծի ընտանիքը, եւ «Արտաշիրը լսել էր, թէ հայոց նախարարներից մէկը Խոսրովի որդիներից մէկին առնելով փախցրել ազատել է՝ կայսեր դուռը հասցնելով...» (էջ 303): Յաջորդիւ Խորենացին ներկայացնում է Տրդատի քաջագործութիւնները, որ ապագայ արքան կատարում է Հայաստանի անիշխանութեան շրջանում իր մանկութեան տարիներին: Ըստ էութեան, առաջին յատկանիշը, որ նկատւում է Տրդատի կերպարում, քաջ եւ արի լինելն է: Խորենացին մէջբերում է Փերմելիանոսի պատմածը Տրդատի քաջագործութիւնների մասին. Տրդատը մանուկ հասակում սիրում էր ձի հեծնել, կորովի ձիավարում էր, հմուտ էր զինավարժութեան մէջ, սովորել էր պատերազմական արուեստը, վարժ տիրապետում էր կրկեսային արուեստին այնքան, որ «զերկուց ցլուց վայրենեաց միով ձեռամբ կալեալ զեղջերէն, թափեաց հանդերձ ընդվզեալ ջախջախմամբ» (էջ 264):

Տրդատ Մեծի կերպարակերտումը իւրօրինակ զարգացում է ստանում: Ահա Պատմահայրը ներկայացնում է Տրդատի քաջագործութիւնները արքայ եղած ժամանակ մինչ նոր հաւատքն ընդունելը: Այսինքն՝ միայն քրիստոնէութեան ընդունումը չէ, որ գեղեցկացնում է այս Արշակունու կերպարը: Նա այն ցանկալի «ոչ բնիկ» տէրն է, որ իր անձով ու գործով արժանացել է Պատմահօր դրական վերաբերմունքին: Այս Արշակունին բազում յաղթանակներ է տօնում՝ անձամբ գլխաւորելով մարտերը: Կերպարը ստանում է դիւցազնական լիարժէք յատկանիշներ՝ երբեմն անգամ չափազանցուած: Թագաւոր ժամանակ՝ պարսիկների դէմ կռուելիս, Տրդատը, ասում է պատմիչը, քաջութեան աւելի մեծ գործեր է կատարում, քան «Իլիականում» է պատկերուած: Խորենացին ներկայացնում է մի դիպուած, որտեղ երեւում է Տրդատի դիւցազնական ողջ ուժը. պարսից զօրքը, գիտենալով արքայի սաստիկ եւ հերոսական ուժը, նետերի հարուածով գետնին է փռում Տրդատի ձին, բայց արքան, ոտքի կանգնելով եւ հետիոտն յարձակուելով, թշնամիներից շատերին գետին է գլորում եւ, մէկի ձին բռնելով, «արիաբար աշտանակեր» (տե՛ս էջ 273): Ապա Խորենացին սաստկացնում է նկարագրութիւնը. «Միւսանգամ կամաւոր լեալ հետի՝ սուսերաւ զերամակս փղացն պուղէր» (էջ 274): Ինչպէս բնորոշ է դիւցազնական հերոսին, Տրդատը մարմնաւորում է ազնուական ոգի եւ աս-

պետական վեհանձնութիւն, խիզախ եւ համարձակ բնաւորութիւն։

Խորենացին շարունակում է Տրդատի յաղթահանդէսները ներկայացնելը։ Հերոսական Տրդատի քայլերից Խորենացին յիշում է Աղուանաց պատերազմի ժամանակ Բասիլների արքային երկու կէս անելը։ Նա դառնում է թշնամական զօրքի ահ ու սարսափը. նրա ձեռքերի արագութիւնից բազում զինուորներ էին տապալւում։ Իր երկսայր սրի հարուածով քաջազուն Տրդատը երկու կէս է անում թշնամու զօրքի առաջնորդին, նոյն հարուածով մէջտեղից կիսւում է եւ նրա ձին։ Թշնամական զօրքը, տեսնելով իրենց արքային սպանուած, փախուստի է դիմում, իսկ Տրդատն էլ նրանց հետապնդում է մինչեւ յունաց աշխարհը։

Տրդատի առնական ուժի եւ արիութեան բազմաթիւ գործերի մասին ամէն մի առիթով շարունակաբար պատմում է Խորենացին՝ ընթերցողին յանուն հայրենիքի պաշտպանութեան հերոսականութեան ոգով դաստիարակելու նպատակով։

Քաջ Տրդատ Մեծը Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ յատկապէս դրական է շեշտաւորւում Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն դարձնելու շնորհիւ։ Կարեւոր է Խորենացու վերաբերմունքի տարբերութիւնը առ Լուսաւորիչ եւ Տրդատ Մեծ։ Չնայած այն փաստին, որ նրանք երկուսն էլ ահռելի աշխատանք են տարել աստուածահաճոյ կրօնը ընդունելու գործում, Տրդատը երբեմն Լուսաւորչից աւելի բարձր տեղ է զբաղեցնում։ «Հաւատի ու ճգնողութեան մէջ նրանք երկուսը հաւասար էին, իսկ համոզիչ կամ ստիպողական խօսքերով հնազանդեցնելու մէջ թագաւորի շնորհն աւելին էր։

Տրդատը նաեւ զբաղւում է շինարարութեամբ։ Ահա նա վերաշինում է Գառնիի տաճարը։ Տրամաբանական հակասութիւնն ակնյայտ է. քրիստոնէութիւն ընդունած արքան, քանդել էր տուել բազմաթիւ մեհեաններ, չէր կարող այդ ընթացքում կանգնեցնել մէկ ուրիշ հեթանոսական տաճար, հետեւաբար Խորենացին շփոթում է փաստերը։ Իրականում Գառնիի հեթանոսական տաճարը կառուցուել է ոչ թէ Տրդատ Մեծի, այլ Տրդատ Առաջինի կողմից, որին Խորենացին չի անդրադառնում։

Տրդատի կերպարին Խորենացին յաւելում է նաեւ ողբերգական յատկանիշներ։ Տրդատի կեանքի վերջին շրջանի մասին խօսելիս Խորենացին եւս մէկ անգամ ընդգծում է արքայի՝ դէպի բարին ու լաւը եղած վերաբերմունքը, ընդգծում հայ ժողովրդի մերթ ընդ մերթ արթնացող խստասրտութիւնը, ամբարտաւանութիւնը եւ անհաճոյ վերաբերմունքը դէպի բարի գործերը, որոշակի մասի հակադրուելը արքայի՝ քրիստոնէական կրօնին հետեւելու ցանկութեանը։ Եւ Տրդատը, չկարողանալով ներել նրանց այս պահուածքը, հրաժարւում է «երկրային պսակից» եւ գնում «երկնային պսակի» ետեւից՝ ընտրելով ճգնակեացի կեանքը։

Խորենացին աւարտին է հասցնում Տրդատի կերպարի դրամատիզմը՝ ցոյց տալով նրա մահուան պատկերը, միաժամանակ արտայայտելով իր բարկութիւնը. «Աստանօր ամաչեմ ասել զճշմարտութիւնն, մանաւանդ թէ ***զանօրէնութիւն*** *և* ***զամբարշտութիւն*** *ազգիս մերոյ, և զմեծի ողբոց և արտասուաց արժանի զսոցա գործս։ Քանզի զհետ առաքեալ, կոչեն զնա՝ լինել ըստ կամաց նորա, և ունել զթագաւորութիւնն։ Իսկ ի չհաւանել սրբոյն՝ տան նմա արբումն, որպէս անդ ուրեմն ի հնումն Աթենացիքն Սոկրատակ զմոլեխինդն. և կամ թէ զմերն իսկ ասել, կատաղեալ Եբրայեցիքն ըմպելի լեղեալ խառնեալ Աստուծոյ մերոյ» (էջ 302)։ Ապա Խորենացին հայերին այս բնորոշումն է տալիս. «Ազգ թիւր և դառնացող, ազգ, ոչ ուղղեաց զսիրտ իւր, և ոչ հաւատարմաղաւ Աստուծոյ ոգի*

նորա» (էջ 302)։ Խորենացին Տրդատի մահուան մասին ցաւով արձանագրում է. «Արբուցեալ նմա դեղ մահու՝ զրկեցան ի լուսոյ շնորհաց ճառագայթից նորա» (էջ 304)։ Տրդատ Մեծ արքայով Մովսէս Խորենացին աւարտում է «Հայոց պատմութեան» երկրորդ գիրքը։

«Մեր հայրենիքի պատմութեան աւարտը» գրքում Խորենացին ներկայացնում է Տրդատի մահից յետոյ մինչեւ Արշակունեաց արքայատոհմի կործանումն ընկած դէպքերը։

Յաջորդ Արշակունին ***Խորով Կոտակն էր****՝ Տրդատ Մեծի որդին։ Եթէ Փաւստոս Բուզանդը գոնէ Խոսրովի վերաբերեալ դրական է արտայայտւում, Խորենացին Կոտակի եւ յաջորդ արքաների մասին արտայայտւում է քննադատաբար։ Այսպէս օրինակ՝* ***Արշակ Բ-ն****, որին ընթերցողը սկսում է ճանաչել Վաղեսին եւ այլոց գրած թղթերից, որոնցում երեւում է նրա վերաբերմունքը բիւզանդական կայսեր եւ պարսից արքայի նկատմամբ։ Եթէ Փաւստոս Բուզանդի երկում Արշակ Երկրորդը, իր թերութիւններով հանդերձ, ներկայացուած է որպէս իսկական հայրենասէր։ Նա ըմբոստ է իր թշնամիների նկատմամբ եւ սիրուած՝ ժողովրդի կողմից՝ յատկապէս հայ զինուորներից, ովքեր քաջաբար կռւում էին յանուն նրա, ապա Մովսէս Խորենացու երկում նման դրական յատկանիշների դրսեւորումը ոչ միայն բացակայում է, այլեւ սարկաստիկ ձեւով ծաղրուած է արքային վերագրուող քաջութիւնը. «Անձնահաճ եղեալ, պարծելով հանապազ ի գինարբուս և յերգս վարձակաց. քաջ և արի երևեալ քան զԱքիլլես, իսկ արդեամբք Թերսիտեայ նմանեալ կաղի և սրագլխոյ. վտարանջեալ յիւրոց նախագլխացն, մինչև զամբարտաւանութեանն ընկալաւ վարձս» (էջ 334)։*

Խորենացին որոշակի փոփոխութիւններով ներկայացնում է նաեւ Արշակ եւ Գնել, Արշակ եւ Տիրիթ յարաբերութիւնները։ Կուրացած Տիրանը, իրեն մեղաւոր համարելով որդու՝ Տրդատի մահուան համար, թոռանը՝ Գնելին է տալիս իր բոլոր ունեցածը եւ կալուածքները, ամուսնացնում Փառանձեմի հետ։ Արշակը, ի դէմս Գնելի, տեսնում է իրեն հակառակորդ եւ փորձում հեռացնել իր երկրի հեռաւոր վայրերը, ինչի պատճառով արժանանում է կուրացած հօր կշտամբանքներին։ Ահա այստեղ Արշակի բացասական կողմերը ներկայացւում են էլ աւելի խտացուած գոյներով։ Խորենացին առաջ է քաշում այն մտայնութիւնը, որ Տիրանին սպանել է տուել Արշակը՝ խեղդամահ անելու հրաման արձակելով։ Այնուհետեւ Արշակը, հետամուտ լինելով Տիրիթի եւ Վարդանի նենգ խօսքերին, նորից նախանձով եւ կասկածով է լցւում Գնելի նկատմամբ։ Ի տարբերութիւն Բուզանդի «Հայոց պատմութեան», որում Գնելն արքունիք է հրաւիրւում Վարդանի կողմից, Պատմահայրը այդ դիպուածը ներկայացնում է հետեւեալ կերպ. Արշակը անձամբ թուղթ է յղում Գնելին։ Այս թղթով Արշակը ներկայանում է հաշուենկատ, նախանձոտ, խորամանկ արքայի կերպարում. «Արշակ արքայ Հայոց մեծաց, Գնելոյ իմում որդւոյ խնդալ։ Տեսցես տեղիս քաջերէս ի լերինդ Ծաղկաց զպարկացիր ջրով և պատրաստեսցես. զի եկեալ մեր՝ ըստ արժանեաց թագաւորականաց հանդիպեսցուք ցորսոց» (էջ 342)։ Հետամուտ հրաւէրին՝ Գնելը գնում է արքունիք եւ սպանւում արքայի հրամանով։

Խորենացին նշում է, որ Արշակը չապաշխարեց, այլ անամօթաբար, սպանուածի գանձերն ու ժառանգութիւնն իրենով անելուց յետոյ կնութեան է առնում Գնելի կնոջը՝ Փառանձեմին, որից ունենում է մի որդի եւ անուանում Պապ։

Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ Տիրիթի նկատմամբ Արշակի բարկութեան պատճառը այն չէ, որ Տիրիթն իրեն խաբել էր՝ Գնելին վատաբանելով, այլ այն,

որ Տիրիթին էր մեղադրում հարեւան երկրների հետ յարաբերութիւնների սրման համար։ Տիրիթը նոյնպէս սպանում է Արշակի հրամանով։

Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ պահպանուած են Արշակաւան դաստակերտի հետ կապուած այն դրուագը, որ Արշակաւանը բնակեցւում է գողերով, մարդասպաններով, ուրիշների կանանց փախցնողներով, որոնք ազատւում էին դատ ու դատաստանից։ Արշակաւանի կառուցումը վկայում է Արշակ Բ-ի ինքնատիպ քաղաքականութեան մասին։ Ե՛ւ Բուզանդը, ե՛ւ Քերթողահայր Խորենացին քննադատաբար ու զայրոյթով են խօսում Արշակի այս «յանդուգն» ձեռնարկման մասին։ Բայց պէտք է ընդունենք, որ Արշակը իրականում ցանկանում էր ունենալ ազատ եւ օտարների բռնութիւններից զերծ անկախ ու ինքնուրոյն մի պետութիւն։ Բայց շրջապատն ու հանգամանքները ստիպում են նրան ենթարկուել այս կամ այն տէրութեան կամքին, հետեւաբար նա փորձում է, անջատուելով շրջապատից, իրագործել արտաքին եւ ներքին թշնամուց պաշտպանուած եւ ինքնուրոյն պետութեան գաղափարը՝ կառուցելով Արշակաւանը։

Մինչ հայերը զբաղուած են լինում ներազգային անմիաբանութեամբ, թշնամիները ամէն կողմից սկսում են ճնշել հայերին։ Արշակը դիմում է Ներսէսին՝ իրեն եւ նախարարներին յաշտեցնելու նպատակով։ Ներսէսը յաշտեցնում է արքային եւ նախարարներին։ Որոշ ժամանակ անց Արշակը, չմոռանալով Արշակաւանի հանդէպ նախարարների արածը, նրանցից շատերին խաբէութեամբ հրաւիրում է ընթրիքի եւ սրի է քաշում բոլորին՝ տղամարդկանց, կանանց եւ երեխաներին։ Արշակի կերպարի դաժանութիւնը հասնում է առաւելագոյնի, երբ նա հրամայում է հորերի փայտից կախել նախարարների ծառաներին, որոնք իրենց տէրերի ոսկորները թաղել էին։ Արշակը իրեն քննադատող եւ հանդիմանող Խադ սարկաւագին նոյնպէս հրամայում է սրի քաշել եւ քարկոծել։ Սակայն Խադին իրեն ծանօթ նախարարները փախցնում են իրենց գաւառները։

*Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ Արշակի կերպարի բացասական կողմերի արտայայտութիւններից է նաեւ այն, թէ ինչ բովանդակութեամբ նամակ է յղում այս Արշակունին իր ծանօթ պարսից զօրքի իշխանին, երբ Շապուհը նորանոր հարուածներ է տեղում Հայոց աշխարհի վրայ։ Խորենացին Արշակին ներկայացնում է խտացուած բացասական յատկանիշներով. նամակում Արշակը ներկայանում է իբրեւ դաւադիր արքայ, որի ուղեղում միայն սեփական կաշին փրկելու ցանկութիւնն է. «Դու արիւն իմ և հարազատութիւն, ընդէ՞ր այդպիսեաւ վարես զիս ջերմութեամբ. Թէպէտ և ակամայ զգալուստ քո գիտեմ, ոչ կարացեալ սայթաքել զհրամանս Շապհոյ՝ գալ ի վերայ քո ազգականիս։ Այլ **արդ՝ թուլացո՛ ինձ ղօղել ուրեք վայրկեան մի ժամանակի, մինչև ոգի առեալ՝ անցանեմ կարացից յերկիրն Յունաց. և դու կալցես զաշխարհս, և բազմաց յինէն հանդիպեսցիս բարութեանց, որպէս ի մտերիմ հարազատէ**» (ընդգծումը մերն է- **Ա. Կ.**)։ Արշակը այստեղ ներկայանում է իբրեւ փոքրոգի եւ վախկոտ մարդ։ Արշակ-Ալանաւոզան յարաբերութիւնը ոչ միայն իսպառ բացակայում է Բուզանդի «Հայոց պատմութեան» մէջ, այլեւ ներկայացւում է բոլորովին ուրիշ լոյսի տակ։ Ալանաւոզանը մէկն է բազմաթիւ այն մարդկանցից, որոնք գլխաւորում էին Հայոց աշխարհը աւերելու եկած զօրագնդերը։ Արշակը Վասակ Մամիկոնեանի աջակցութեամբ երեսուն տարի արժանի հակահարուած է տալիս թշնամու՝ իրար յաջորդող բանակներին, այդ թւում եւ Ալանաւոզանին. «...Գայր հասանէր ընդ առաջ զօրացն Պարսից. հարկանէր կոտորէր զամենեսեան առ հասարակ. և զմնացեալսն փախստեայս առնէին յերկիրն Պարսից. և*

ինքեանք զգուշանային սահմանացն իւրեանց»[11]։

Խորենացին, չլինելով Արշակի ժամանակակիցը, սուբյեկտիւ է նրա մասին խօսելիս։ Պատմահայրը՝ որպէս քրիստոնէական բարոյականութեամբ առաջնորդուող անհատ, քննադատում է Արշակ Երկրորդի անձնական կեանքը, չի ընդունում նրա քայլերը՝ ընդդէմ արտաքին եւ ներքին թշնամիների։

Պատմահօր գրքում Արշակի՝ Շապուհի կողմից գերեվարուելու պատճառն այն հանգամանքն էր, որ Փառանձեմը հրաժարուել էր անձամբ ներկայանալ պարսից արքային։ Առանց ներկայացնելու մանրամասները Խորենացին մի տողով ընդգծում է, որ Արշակը, լսելով երկրին պատուհասած թշուառութիւնների մասին, վերջ է տալիս իր կեանքին։ Խորենացին էլ Բուզանդի նման Արշակի կերպարի մէջ մտցնում է դրամատիզմի շերտեր՝ համառօտ ներկայացնելով նրա վախճանը։

*Ժամանակագրօրէն յաջորդն Արշակունիներից **Պապն** է։ Առաջին անգամ Պապին ընթերցողը տեսնում է Զիրաւի ճակատամարտում։ Պատմիչն արտայայտում է չեզոք վերաբերմունք նրա անձի նկատմամբ՝ միայն նշելով, որ «Յայնմ հետէ խաղաղեցաւ երկիրն, ընդ ձեռամբ Պապա նուաճեալ» (էջ 372)։ Պապի կերպարն այնքան էլ խտացուած գոյներով ներկայացուած չէ, որքան Փաւստոս Բուզանդի գրքում է։ Խորենացին միայն նշում է, որ Ներսէսը խորհուրդ է տալիս Պապին հօր՝ Արշակի նման անիրաւութիւններ չգործել, գնալ շիտակ ճանապարհով, յարգել նախարարներին, իսկ վերջիններին էլ՝ յարգել եւ ենթարկուել արքային։ Խորենացին ընդգծում է, որ Պապը նախարարներին վերադարձնում է նրանցից խլուած տարածքները, ցուցաբերում էր «անընչասէր բարք և ապրում էր առատաբար»։ Եւ այդ բարքի համար արժանանում է Ներսէս Մեծի հանդիմանութիւններին եւ ցանկանում վնասել նրան, բայց Թէոդոս ինքնակալից երկիւղելով, որոշում է դա անել գաղտնաբար՝ մահացու դեղ խմեցնելով կաթողիկոսին։*

Ի հակադրութիւն Փաւստոս Բուզանդի նկարագրութիւնների՝ Մովսէս Խորենացին արքայի վախճանը նկարագրում է հետեւեալ բովանդակութեամբ. Թէոդոսի հրամանով Պապի դէմ են ուղարկւում Տերենտիոսի զօրքը. վերջինս բռնում է Պապին եւ շղթայակապ ներկայացնում կայսերը։ Եթէ Բուզանդը ներկայացնում է խնջոյքի տեսարանում Պապի սպանութիւնը Տերենտիոսի կողմից, Մովսէս Խորենացին գրում է, որ Պապը գլխատուել է Թէոդոսի կողմից Բիւզանդիայում եօթ տարի կառավարելուց յետոյ. «Եւ պապայ յաղերս աղաչանաց անկեալ, զի մի՛ մեռցի, այլ յանդիման լինել արքայի. և քաջին Տերենտիանոսի գթացեալ՝ շնորհեաց նմա զմաղթանսն։ Եւ երկաթեղէն կապանօք երթեալ առաջի մեծին Թէոդոսի՝ ըստ իւրում անզգամութեանն սակրով վճարի, թագաւորեալ ամս եօթն» (էջ 374)։ Խորենացին փոփոխում է մանրամասները՝ երբեմն առաջ քաշելով իր պատկերացումները կատարուած դէպքերի վերաբերեալ։

Ստացւում է այնպէս, որ հայոց արքաները մեծ մասամբ զոհւում կամ ընկճւում են թշնամիներ արքաների կողմից, ինչն էլ մեր գլխաւոր խնդիրներից է։ Առանց արքայի գոյատեւող տէրութեանը տիրելը կարող է տեւել ակնթարթ, այն էլ այնպիսի երկրում, որի ներսում երկպառակութիւններն ու անմիաբանութիւնները, արքաների դէմ ըմբոստութիւնները, վերջիններիս յաճախ անտրամաբանուած քայլերը դառնում են սովորական եւ մեծ աղէտ բերում պետութեանը։

Կարեւոր մի հանգամանք եւս. Տրդատ Մեծին յաջորդող արքաների մասին Խորենացին խօսում է հակիրճ։ Օգտուելով Բուզանդից՝ Պատմահայրը շրջանցում է Տիրանի,

[11] **Փաւստոս Բուզանդ**, Հայոց պատմութիւն, Երեւան, 1987, էջ 172։

Արշակի, Պապի մասին վիպական հատուածները եւ պարզապէս նշում, որ ամէն յաջորդ Արշակունի նախորդի նման ոչ մի կարեւոր գործ չի արել, ապրել է հաճոյքների համար՝ արժանանալով հոգեւոր դասի ներկայացուցիչների յանդիմանութիւններին։

Արդէն Արտաշիրի Արշակունու՝ հայոց գահից հեռացնելու դրուագում վերստին Խորենացին ընդգծում է հայ ժողովրդի չարաղէտ անմիաբանութիւնը եւ արքաների նկատմամբ կրկնուող դաւադրութիւնը։ Ինչպէս նկատում է Հր. Թամրազեանը, «արդէն նախորդ գլուխներում Խորենացին բնաւ էլ մեղմ չի խօսում Արշակունեաց ցեղի վերջին թագաւորի մասին, դառնութեամբ է յիշում նրա շուայտ ու ցոփ կեանքը, անառակ ցանկութիւնները։ Բայց դրա հետ միասին, նա չի մոռանում աւելի կարեւոր մի բան. չէ՞ որ նա թագաւոր էր, Հայոց թագաւոր։ Նրան չէր կարելի մատնել օտարներին եւ անհաւատներին, քանի որ կար աւելի մեծ բան՝ դարերից ստացած ժառանգութիւնը՝ հայոց գահը, որը նախարարների չար միաբանութեան եւ պարսիկների խարդաւանքների պատճառով, Արտաշիրի գահազրկման հետ միասին, վերանում էր»[12]։ Ահա նախարարների չարախօսութիւններով պարսից Վռամը Արտաշիրից խլում է արքայութիւնը, իսկ Սահակ Պարթեւից՝ կաթողիկոսական աթոռը։

Այսպիսով՝ իր կերտած կերպարներով, ինչպէս նաեւ գեղեցիկ նկարագրութիւններով, իմաստալից ասոյթներով ու զգացմունքային խօսքով, առաքինութեան փառաբանութեամբ Մովսէս Խորենացին նպատակ է ունեցել պաշտպանել միասնական հայրենիքի, հզօր ու լուսաւոր ազգային պետութեան գաղափարը։ Խորենացին բարձր է գնահատում այն իշխաններին եւ «բնիկ» ու եկուոր թագաւորներին, որոնք նպաստել են հայկական պետութեան ամրացմանը եւ հայրենիքի տնտեսական, քաղաքական, մշակութային առաջադիմութեանը։ Պատմահայր Մովսէս Խորենացու «Հայոց պատմութիւնը» դարեր շարունակ եղել է դասագիրք, օրինակ եւ չափանիշ միջնադարեան հայ բոլոր պատմագիրների համար։ Այն դուրս է եկել ազգային պատմութեան շրջանակներից եւ դարձել համաշխարհային պատմագիտական մտքի նշանաւոր կոթողներից մէկը։

ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԵՊՀ Հայ բանասիրութեան մագիստրոս,
ՀԱՊՀ քոլէճի դասախօս

[12] Տե՛ս **Հր. Թամրազեան**, Հայ բնադատութիւն, Գիրք Ա, Երեւան, 1983, էջ 100։